

**«ՄԵԿՈՒՄ» ՍՊԸ
տնօրեն Գոհար Պապոյանից
Արմավիրի մարզպետ
Դավիթ Խուղաթյանին**

23.07.2024թ.

ք. Գյումրի

Հարգելի պրն Խուղաթյան,

Հայտնում ենք Ձեզ մեր խորին շնորհակալությունը ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության «Մուտք դեպի շուկա» բաղադրիչի կողմից աջակցության շրջանակներում ՄԵԿՈՒՄ թիմի հետ Արմավիրի մարզի ՊՈԱԿ-ների և ՀՈԱԿ-ների ներկայացուցիչների հետ հանդիպում-քննարկումը կազմակերպման աջակցության համար:

Հանդիպում-քննարկումը տեղի ունեցավ սույն թվականի ապրիլի 4-ին, որին մասնակցում էին մարզի ՊՈԱԿ-ներից և ՀՈԱԿ-ներից մոտ երեսուն մասնակից:

Քննարկման ժամանակ ընդգծվեցին ոլորտային հաշվապահական և կադրային գործին վերաբերող խնդիրներ, որոնք մեր թիմի հմուտ մասնագետների կողմից հնարավորինս պարզաբանվեցին: Բացի մասնագիտական քննարկումներից ՄԵԿՈՒՄ թիմը ներկայացրեց հանրային հատված կազմակերպությունների հաշվապահական հաշվառման աջակցող նոր ավտոմատացման ծրագիրը՝ ՄԵԿՈՒՄ ՀԱՄԱԿԱՐԳԸ, որն առաջարկում է հաշվապահական հաշվառման ամբողջ գործընթացի ավտոմատ իրականացում և ծրագրային լուծումներ: ՄԵԿՈՒՄ ՀԱՄԱԿԱՐԳ-ով աշխատանքի անցումն առավել կթեթևացնի հաշվապահների աշխատանքը, ինչպես նաև տնօրեններին և վերադաս մարմնի (մարզպետարան, նախարարություն, այլ) ևս հնարավորություն կընձեռի մշտապես հետևելու ընկերությունների ֆինանսներին ամենօրյա ռեժիմով:

Խնդրում ենք ՊՈԱԿ-ների ներկայացուցիչներին տեղեկացնել համակարգից օգտվելու բաժանորդագրության ցանկության դեպքում կապվել 093 972993 հեռախոսահամարով՝ Դարիք Հարությունյանին կամ 060 510101 Գոհար Պապոյանին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոչ բոլոր ՊՈԱԿ-ների ու ՀՈԱԿ-ների ներկայացուցիչները հնարավորություն ունեցան մասնակցելու հանդիպում-քննարկմանը, ՄԵԿՈՒՄ թիմը որոշում է կայացրել ևս մեկ անգամ ներկայացում

կազմակերպել, որը տեղի կունենա ս.թ. օգոստոսի 19-ին ժամը 11:00-ին, ZOOM հարթակում հետևյալ հղմամբ՝

<https://us06web.zoom.us/j/83679539591?pwd=goEiL8H895h0zvWwZNQqleSDgGcTTI.1>

Topic: Mekum Presentation

Meeting ID: 836 7953 9591

Passcode: 250007

Խնդրում ենք առցանց քննարկման մասին տեղեկատվությունը և հղումը ևս տարածել ձեր մարզի հանրային հատվածի բոլոր կազմակերպությունների (ՊՈԱԿ-ներ, ՀՈԱԿ-ներ, այլ) շրջանում:

ՄԵԿՈՒՄ թիմը պատրաստակամ է ծրագրով աշխատանքի ողջ ժամանակահատվածում ինչպես ձեր մարզպետարանի, այնպես էլ մարզային եկթակայության հանրային հատվածի բոլոր կազմակերպությունների տնօրեններին, վարչատնտեսական համակարգողներին և հաշվապահներին մասնագիտական ու տեխնիկական անվճար խորհրդատվություն տրամադրելու և աջակցելու ծրագրի անխափան ներդրմանն ու կիրառմանը:

Կանխավ շնորհակալություն:

«ՄԵԿՈՒՄ» ՍՊԸ տնօրեն  Գոհար Պապոյան

